

« եփած . թէ ձիթով տապկես՝ լաւ կու լինի ,
« թէ քացախով կամ լիմճնի ջրով ուտես՝
« այլ աղէկ է : — ե . ժուատեան . որպէս
« զջարաբն է , ապա կըուր է , և էնէպին
« մէջն ներկ կու գնեն նախաշքն . մէջն
« կ'ուտլիի խում և եփած , որպէս զջարաբ :

« զ . Սեսէֆ . էնէպին նախաշքն ներկ կու
« գնեն . մէջն հ'աւովի , որպէս զժուատեան
« է . եփածն լաւ է քան զիսում : — ե .
« թէստանէն . կլոր է . և էնէպին վրան
« փոշ է . մէջն կարմիր է որպէս զձկան
« հաւկիթ . ձիթով տապկելն լաւ է . և այլ
« պէսպէս եփելն կու լինի :

« ը . Սուրուննան . որպէս եղէզի նման է .
« մէջն խաշեն և ձիթով կու տապկեն , և
« այլ շուալյ կու շինեն զաքրանով և քա-
« ցախով և պահարով . մաքրափ (պինդ) է ,
« յուժով » :

Փառք համայնից զոյացուցչին :



ՎԱՆԱՅԻ ԾՐՎԱԿԻ ԿՂԶԻՆԵՐԸ

ԱՂԹԱՄԱՐ

(Տար . տես էջ 26)



Ա Ն Օ Թ Է արդէն ընթերցողաց թէ
Աղթամար Սեսէլի լերին մողովը ըստ 1414ին նզովիք տակ ինկնալէ վերջ ,
Տանչպէս արձակուեցա այդ նզովիքն
1429-1495 տարիներու մէջ , չեթում
թարբայի ժամանակ . թայց այդ արձակումն
նոյն ժամանակ բոլոր ազգին ծանուցուած
վիճելով , մնաց իւր ժամանաւորութեան մէջ .
և ինչպէս կ'երեկ՝ Գրիգոր է Անաւարզեցի
կաթողիկոսի յաջորդը ևս՝ ընդ նզովիք հա-
մարած են Աղթամարաց աթոռը , հաճոյ շի-
նելով իրենց՝ նորա ինքնազգուի որչուումը և
բացարձակ անկախութիւնը : Մեր այս ըստածը
կը հաստատեն Միիթար կաթողիկոսի , ծի-
գարու առաջին կիսուն մօտերը , ի պատաս-

խանի Լատինաց զրածի մէջ յիշուած հե-
տեւալ տաղերը . « կաթողիկոսն Աղուանից
հնազոյն է և կարգեալ յերանելույն Գրիգորէ .
իսկ Աղթամարայ է արքիափիսկոպոս , և յա-
սաշնմէ հնազանդ էր կաթողիկոսին . այլ
սակաւ ժամանակ է զի եղ անձին անոն

կաթողիկոսի . որոյ վասն բանազրեցաւ ի
կաթողիկոսին Հայոց , և ցարդ եւս ի բա-
նազրանու է : Քիչ վերջն այլ կը յաւելու .
Աղթամարի պատուան Աղթամարայ յօրմէհետէ
ապստամբեցաւ ի մէջ , և բանազրեցար
հանդերձ վիճակակցօք նորա , ոչ կարեն
հաղորդիլ ընդ մեզ , թէ ոչ նախ հպատա-
կեսիցն և արձակեսցին ի բանազրանաց՝ յո-
րում են » : Այսպէս Աղթամարայ աթոռը
երկար տարիներ միշտ ընդ նզովիք համա-
րուցաւ ազգին մեծամասնութիւնէն . այնպէս
որ՝ Մեծոփեցի թովմա վարդապետի զրածի
համեմատ՝ Տաթեւացի Գրիգոր վարդա-
պետը , Ալինեաց Տաթեւու վանցին հա-
լածանաց պատճառաւ փոխազրուելով Ար-
մէշ գաւառի Մեծոփայ վանըը , հոն Հայոց
858 և քրիչական 1410 թուին ժողով
գումարած և արձակած է զիշտամար ի
կապանաց : Սակայն զեռ շըսած թէ ինչ
կերպով եղաւ Գրիգորի Տաթեւացույն մի-
ջոցաւ Աղթամարայ ի կապանաց արձա-
կուին , լաւ կը համարիմ յիշել նոյն Տա-
թեւացի վարդապետի մի զրուածը , որ
գտանի ի ձեռազիր կանոնազիրս մեր հե-
տեւալ վերնազրով . « կանոնց և բանք գե-
ղեցիկ և յոյժ պիտանի վասն աթոռոյն Աղ-
թամարայ որ են ի ներըց բանազրանաց » :

Երրում հետո Աղթամարայ յօրմէհետէ
ապստամբեցաւ ի մէջ , և բանազրեցար
հանդերձ վիճակակցօք նորա , ոչ կարեն
հաղորդիլ ընդ մեզ , թէ ոչ նախ հպատա-

կեսիցն և արձակեսցին ի բանազրանաց՝ յո-
րում են » : Այսպէս Աղթամարայ աթոռը
երկար տարիներ միշտ ընդ նզովիք համա-
րուցաւ ազգին մեծամասնութիւնէն . այնպէս
որ՝ Մեծոփեցի թովմա վարդապետի զրածի
համեմատ՝ Տաթեւացի Գրիգոր վարդա-
պետը , Ալինեաց Տաթեւու վանցին հա-
լածանաց պատճառաւ փոխազրուելով Ար-
մէշ գաւառի Մեծոփայ վանըը , հոն Հայոց
858 և քրիչական 1410 թուին ժողով
գումարած և արձակած է զիշտամար ի
կապանաց : Սակայն զեռ շըսած թէ ինչ
կերպով եղաւ Գրիգորի Տաթեւացույն մի-
ջոցաւ Աղթամարայ ի կապանաց արձա-
կուին , լաւ կը համարիմ յիշել նոյն Տա-
թեւացի վարդապետի մի զրուածը , որ
գտանի ի ձեռազիր կանոնազիրս մեր հե-
տեւալ վերնազրով . « կանոնց և բանք գե-
ղեցիկ և յոյժ պիտանի վասն աթոռոյն Աղ-
թամարայ որ են ի ներըց բանազրանաց » :

Երրում հետո Աղթամարայ յօրմէհետէ
ապստամբեցաւ ի մէջ , և բանազրեցար
հանդերձ վիճակակցօք նորա , ոչ կարեն
հաղորդիլ ընդ մեզ , թէ ոչ նախ հպատա-

կեսիցն և արձակեսցին ի բանազրանաց՝ յո-
րում են » : Այսպէս Աղթամարայ աթոռը
երկար տարիներ միշտ ընդ նզովիք համա-
րուցաւ ազգին մեծամասնութիւնէն . այնպէս
որ՝ Մեծոփեցի թովմա վարդապետի զրածի
համեմատ՝ Տաթեւացի Գրիգոր վարդա-
պետը , Ալինեաց Տաթեւու վանցին հա-
լածանաց պատճառաւ փոխազրուելով Ար-
մէշ գաւառի Մեծոփայ վանըը , հոն Հայոց
858 և քրիչական 1410 թուին ժողով
գումարած և արձակած է զիշտամար ի
կապանաց : Սակայն զեռ շըսած թէ ինչ
կերպով եղաւ Գրիգորի Տաթեւացույն մի-
ջոցաւ Աղթամարայ ի կապանաց արձա-
կուին , լաւ կը համարիմ յիշել նոյն Տա-
թեւացի վարդապետի մի զրուածը , որ
գտանի ի ձեռազիր կանոնազիրս մեր հե-
տեւալ վերնազրով . « կանոնունք ժողովոց . հո- . ին , էջ 1225
և 1225 :

2 . « Եւ ի ոոյն ժամանակի (թ . հ . 888 =
1410 թ . ժ .) է իննիր եկեալ վասն կապանաց
Աղթամարայ , և մեծահանդէս ժողով արարեալ ,
արձակեաց զամեննեսին (ի կապանաց) հնաց
կաթողիկոսացն մերոց ու . Թովմա Մեծոփեցի ,
1460 ապ . Հանճազրեանցի , էջ 52 :

3 . Կանոնազիրը , բուրբազիր մեծ զրուածի
կասաննէնուպուիս ուժէ (= 1669) թուէին .
թիւ 1477 :

միութեան փափաքով վառուած՝ կը ջանայ ապօրինի և հակառակաթոռ և նողովից ենթարկուած ցուցնելով Աղթամարայ աթոռը և նորա հնազանդութեան ներբեւ գտնուող ժողովորդը, ի միութին և ի հնազանդութին յորդորել զամենեսին Հայոց ընդհանուր հայրապետի՝ որ ի Սիս կիլիկիոյ:

Միջնէն 1409 թուին փափանենով ի Սիս Հայոց ընդհանուր հայրապետութեան կարապետ թ., և կաթողիկոսական պահուն ժառանգորդ էր եղած, բանի մը եպիսկոպոսաց և կիրիկոյ ամբրայի միջոցա՝ Տ. Յակոբ անոն վարդապետ մը, ի Վասպուրական այլ մեծամեծ խոռովութիւնն էր ծագին, Աղթամարայ աթոռոյն նկամամբ: Մենց չփառեց թէ այս ժամանակ Աղթամարայ զահը նստող հայրապետի անունն ինչ էր, զի թէպէտ փոքր ի շատէ մեզ ծանօթ է Աղթամարայ կաթողիկոսաց շարքն, այլ ոչ նոյնակէ նոցա յաջորդութեան թուականնը, մ՛ զիտէ, ինչ առիթ է տուեր այդ ժամանակի կաթողիկոսն՝ Վասպուրականի իշխանաց և առաջնորդաց, որ սկսեր են թշնամանալ իրեն դէմ և մինչեւ անգամ ընկենով յաջոռոյն, և չուզել այլ եւս Աղթամարայ աթոռոյն առաջնորդութիւնը: Ահա ճիշջ այս խոռովութեանց ժամանակ կը պատահի Գրիգորի Տաթեւացոյ, իւր աշակերտօց ի Սիսնեաց՝ յԱմէշ զան, և ամբողջ տարի մը Մեծոփայ վանքը բնակիին: Սոյն այս Գրիգոր վարդապետը, կ'երեւի նոյն տարուան մէջ զրած է մեր վերը յիշած, Աղթամարայ աթոռոյն Պիտանի բանը և կանոնն ըսուածքը: Տաթեւացի վարդապետն, որոյ հոչական իրեր են քաջ աստուածարան ժամանակին, արդէն աստրածուած էր ժողովրեան բազմութեան մէջ, այն ինչ ոտքը կը զնէ Մեծոփայ վանքը, օր աւուր կը զիմնի առ նա Աղթամարցից և այլը, ծանր ծանր ամբաստանութիւններ ընենով իրենց կաթողիկոսի վրայ: Այս տեսնելով Գրիգոր, Մեծոփայ վանքի առաջնորդ Յովհաննէս վարդապետի ինամատարութեամբ, բանի մը վարդապետօց ժողովը¹ կը գումարէ, և

1. Թովմայի Մեծոփեցոյ յիշած մեծանան դէս ժողովն է այս:

կ'որոշեն Աղթամարայ կաթողիկոսն լուծել յիշխանութենէն և նորա բոլոր թեմերն ձգել Հայոց ընդհանուր հայրապետի, ի Սիս նստող Տ. Յակոբ կաթողիկոսի իշխանութեան ներբեւ, և Աղթամարցոց և նոյն աթոռոյն հնազանդ ժողովրդոց գրայէն վերցնել նախընթաց հայրապետաց նզովիներն:

Այս որոշողութիւնը փութով կը կատարեն, զահընկէց ընելով Աղթամարայ հայրապետն, և այս զործողութիւնը ծանուցանելով ընդհանուր ազգին: Առանձին ընդհարձակ խուզմ մ'այլ կը զրեն առ Տ. Յակոբ կաթողիկոսն Սայ, զոր ընդ այլ վարդապետական թուզմն՝ հաւաքած է թուզմա Մեծոփեցի: Այդ թղթոյն այս ման որ կը վերաբերի Աղթամարայ, բաղելով ի զրշաղիք յիսկեփորիկէ¹, ասս ի մէջ բերելը կարեւոր կը կամարիմ:

«... Երանուցում լիցի զերիմասա զիխոյդ՝ վասն Աղթամարայ կաթողիկոսութեանն, որ սուտ էր, հակառակ մեծի և ծշմարիտ կաթողիկոսի մերոյ. զոր անփոյթ են արարեալ ի բազում ժամանակաց նախնիցն մեր և առաջնորդը. ըստ ասացեալ պատճառացն որ ի երկրորդ թուզմ² կայ զրած: Ի յազգմանէ Հոգուոյն եկաք ի կողման վասպուրական ծովատ. զի կրկին խայտառակեալ էր սրտիւք սատանայ զշար կաթողիկոսն Աղթամարայ. զի ոչ կացցէ տունն՝ որոյ հիմն ի վերայ աւազի է եղեալ, և ոչ ի վերայ վիմի, ըստ Տեսան բանի: Եւ զի ամենայն սուտ և շար ինցին ինցեան է ներհակ և կործանիչ, ուստի և ամենայն կարգաւորը և աշխարհականն կամակից եղեն անկման կաթողիկոսի. և նոցին կամօքն ընկեցաք և լուծաք յաթոռոյն, և զրեցաք երկուս թուզմն՝ առաջին և երկրորդ՝ յամենայն բազաքս նոցա և ի զեզու. այլ և յամենայն աշ-

1. Ասկեփորիկ Տ. Բիւ 1094:

2. Հակառակ անչափ ջանից, չկարուղացայ դանել այդ թուզմթը, ինչպէս նաև միւս թղթերն զորս դրեցին առ ամենայն քաղաքու և ամենայն աշխարհէ չորս կողմունու, որոց պարունակութիւնը զիտնալու շատ հետաքրքիք էր:

իարհի չորս կողմունս. ի յարեւելք՝ ի յաթուն Գրիգորիսի (Աղուանից կաթողիկոսի). ի հարաւ մինչ ի Պարսկաստան. ի հիւսիս՝ մինչ ի Վրաց տուն. ի յարեւմուտք՝ մինչ ի յաթուռ սուրբ, և զմզմերդ առ ձեզ առաջեցաք. Պիտի՝ յորժամ հնազանդին սուրբ աթոռոյդ՝ նոցա եպիսկոպոս ձեռնալզիս, և մեսոն շնորհես, որ լուսաւորին հաւատացեալցիք այս: Եւ ի ձեր շնորհացդ բաշխէք դոցա և զաստուածալցյա մեսոնն, և բոլոր այն երեք երկիրն՝ որ ի հնազանդութիւն ձեզ բերաք, ամենեցուն առ հասարակ ամէն ցազաքի յանուանէ, և վարդապետացն և քահանայիցն թուղթ աւրհնութեան գրէք. այլ և ննջեցելոց նոցա արձակութք ի կապանաց անփեցն: Զի յորժամ Աստանայ երկիրն և այլք զայն լսեն, ամենեցեան զղջանան և ի հնազանդութիւն ցեզ զան, և լինիցին մի հաւտ և մի հովիւ. և լսան այսը լիցի մեզ մասն բարեաց: ԱՌԴ լե՛ր ի կամն բարերարին Աստուծոյ, պարծանց համայնից ազգի. բաւ է մեծիմաստ զիտութեան ձեր վեհագ գերարդիքի»:

Մեծ ուրախութեամբ ընդունելով Յակոր գ կաթողիկոսը այս թուղթը, իսկոյն օրհնութեան նամակ կը զրէ առ Արձիշեցիս, հետեւեալ կերպավ. «Այս մեր զիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւնն է և աւրհնութիւնն է Յակորայ ծառայի ծառայիցն Քրիստոսի Յիսուսի Աստուծոյ Տեառն մերոյ. շնորհաց և ողբութեամբ նորին կաթողիկոս ամենայն Հայոց և Վաղարշապատու. զոր զրեմբէք ի յամէնաւրհնեալ և յաստուածապահ յանուանի և յականաւոր մայրաբաղացք յԱրմէշ. և յայլ ամենայն վիճակն իւր բոլորովին, և ի սուրբ ուխտն Մեծոփայ, և այլ ամենայն բոլորովին (բովանակ) թեմն իւր առհասարակ...: Կարաւզութեամբն Աստուծոյ Հաւը, իմաստութեամբն Որդույն Միածնի, ի ձեսն Հոգևոյն սրբոյ առացեմբ զողջոյն սիրոյ ի մէնջ, և աւրհնութիւն առացելական ի յաստուածընկալ սուրբ Նշանէն վանկոյ, և ի շնորհարաջով Աջոս մերոյ սուրբ լուսաւորչին Գրիգորի, և երկնահանգէտ սուրբ աթոռոյս առացելական, որոց սոցա արագահոս սրանչելագործ կա-

րաւ զակութեամբն և աւրհնութեամբն պահանեալ փրկեսից յամենայն վտանգից հոգւոյ և մարմնից». և այնի Ասոր նման ուրիշ թղթեր ալ զրած կը կարծուի Յակոր գ կաթողիկոսն առ այլ և այլ բազացս և մոզովսրպս հպատակն Աղթամարայ. բայց թէ իւր և թէ Տամեեւացյան Գրիգորի և նորա համախոհից շնորհերն և որոշողութիւնը, ըիշ ատենի մէջ ի զերեւ կ'ելնեն: Հազիւ Վ'անցնի սակաւ մի ժամանակ, անպաշտապան և լըեալ երեւող Աղթամարայ աթոռը; կ'ունենայ իրեն ջերմ պաշտպաններ, ոչ միայն յաշխարհականաց և յեկեղեցականաց իւր շրջակայից, այլ և ի կրօնաւորաց միարանից Մեծոփայ և Ստամեւու մենաստանաց: Ասոնք ամենըը միարանած՝ այլազդեց իշխանութեան ձեռօղ, նորէն ի գահն կը բազմեցընեն զահընկէց հայրապետը, և Աղթամարայ սահմաններն կը հայածեն, ի արտաքրին այն ամենըը, որ միարան որոշած էին բոլորովին վերցնել, ոչնացնել Վասպուրականի հինաւուրց հայրապետական գահը: Այս հալածանաց պատճառու Յաթեւացի Գրիգոր վարչապետն այլ կը զանայ Արարատ, ուսկից ընդպարձակ թուղթ մը զրած է առ բնակիչս Արծիւյ, Բերկրոյ և Արծկոյ, յորում կը յիշուի Մեծոփեցի 8. Թովմայի վարդապետական գաւազան տալով՝ Աղթամարայ աթոռոյն հակառակութեան համար՝ զէպ ի այն կողմերը զրկուիլն: Կարծեմ. հետաքրքրական կը լինի, այդ թղթոյն հետեւեալ կտորի բաղել յնսկեփորիկէ (Զ).

«... Եւ աեսեալ զգեղեցիկ կարդղ ձեր և զպայծառ ըրիստոնէութիւն, յոյժ ուրախացաց. բայց վասն անիմից նախնացն, որ կայ ի կերպայ աշխարհացդ, վասն ամըստամբութեան առաջնորդաց սուտանուն կաթողիկոսաց, որ ի ծով Աղթամարայ, յոյժ արտօնմ կայի և ինդրիկ ես զտանել իրացն, զի մի բազմութիւն անմեղ ըրիստոնէիցդ ի ներքյա բանապահանացն մնացեն: Եւ մինչ էի յայս յաղէտ տարակուսի, հրաման ընկալայ ի տեղեան, եթէ զոր ինչ խորհեալ ես արա վաղարշապահի, և իմ ձեսն արկեալ զրով արձանացուցի: բայց բարիստեացն սատանայ՝ հանեալ յարուցման ի յընտա-

նեաց, մերոց և յաշակերտաց, նա և ի բուն փսի բռնաւորաց, Եւ իմ յոյժ արտօնմ գոլով զի ոչ եղեւ զրաւ մերումն բանի, որպէս և ձեզ է յայտնի, այլ ձեմառութեամբ Հոգացին՝ զսիրելի և զձեռնատուն աշակերտ մեր զվարդապետ Թովմա, թղթով և բանի առ մեզ կոչեցի, և յոյժ հանդիսի և բաղում եպիսկոպոսաւք և բաղում զարդապետաւք և քահանայից, տուաց զմա զաւազան իշխանութեան վարդապետական»: Եթեայ կը յշեէ կարգաւ Թովմա զարդապետի առաջինութինըր, որովիք արժանի կը համարի զարդապետական զաւազանի, ու կը յաւելու. Ակարգեալ կացուցի զգա մեզ երեսիսան ի վերայ զարդապետաց, եպիսկոպոսաց, քահանայից և ամենայն ժողովրդոց. ըստ այնմ՝ եթէ փոխանակ հարց որդիք եղիցին. և ետու զմա հրաման և իշխանութին, զաս ասել, աշակերտ կարգել և զաւրենս Աստուծոյ անդր ուսուցանել, և զթերակատար գործն մեր ի զուիս և յաւարտ հասուցանել: Այս հաւադանդիլ(չ) Աղթամարայ, և ոչ տալ թոյլ այլոց ի հնազանդութիւն նոցին»: Դեռ յառաջ կը տանի թուղթը, յանձնելով Արձիշեցոց, որ սիրով և պատուավ ընդունին թովման զարդապետը, կը յայտնէ նաեւ հրաման տախն Թովմա զարդապետին, որ ով որ զջումով հնազանդի Հայոց ընդհանուր հայրապետին, կարենայ ազատիլ ի նզովից, . ի ձեռն և օրհնութեամբ նոյն զարդապետին, և թուղթը կը վերջացնէ օրհնութեամբը: Տաթեւացի զարդապետը, շտեսած ու շլած թէ ինչ արդինք ունեցաւ իւր թուղթն և Թովմայի նորընտիր զարդապետի երթն ի կողմանս ժովակին Վանայ, կը վախճանի նոյն տարւոյ մէջ. բայց պատմութիւնը մեզ կը յայտնէ, որ Թովմա զարդապետը շարունակ աշխատեցաւ, և ջանաց ի գործ զնել իւր. զարդապետէն ընդունած հրահանգները:

Հնգետասաներորդ դարու առաջին կիուն վերջերը (1440—1) այլ և այլ պատմաներ կը հարկագրեն, մեր ազգի ընդհանրական հայրապետի գահն ի Սոյ փոխարքի յէջմիածին, մանաւանդ որ նոյն ժամանակի կաթողիկոսն Տ. Գրիգոր Մուսաբէկեանց, առանց հաւանութեան առաջնորդաց չորս

զվահարու աթոռոց, որոց հաւանութեամբ կը լինէր կաթողիկոսաց ընտրութիւնն, նատած էր ի գահն: Եւ որպէս զի ըստ օրինի նոր կաթողիկոս ընտրելու և զահն ի Սոյ իշմիածին փոխելու համար՝ ազգին մէջ երկպատկութիւն չծափի, ընդհանուր ազգային եկեղեցական ժողով մը կ'ուզեն ընելի ի բնաշխարհն Հայտաստանեաց յԱրարատ: Այս պատմառաւ առանձին առանձին հրամարանց թղթեր կ'ազգարկուին առ ամենայն եւ պիտիպոտոնս, զարդապետս և վահանարա: Քիչ ժամանակի մէջ Հայտաստանի ամէս զաւաներէն, որնց որ կարողացան եկան հասան՝ ժողովը զումարուելու որոշուած զայրն՝ յէջմիածին: Այս ժողովին՝ հաւանութեամբ ամենայն եպիսկոպոսաց և զարդապետաց կ կը կոչուի նաեւ Տ. Գրիգոր Մուսաբէկեանց պարօրինի կաթողիկոսն, ուսկայն նա յանձն շառնուր: Մեր նպատակէն դուրս լինելով սոյն ժողովին նկարագիրն, զանց կ'ընենց յշել այլ ամենայն եպիսկոպոսաց, վահանարաց, իշխանաց և զարդապետաց անուանց, որ ներկայ էին ժողովոյն: Միայն այս ըսենց, թէ ներկայ դանուողաց մէջ կային տասն և եօթն եպիսկոպոսոնք, և բոլոր ժողովականց թիւը եօթն հարիւրը կ'անցնէր: Մեծ ժողեցի զարդապետն Թովմա, մասնաւոր ճիգն և ջանք թափած է Հայրապետական գահուն փոխարքութեան համար, և ինըն ներկայ գանուելով ժողովոյն, բոլոր պատմութիւնն մանրամասնորէն արձանացուցած է ի զիր: Այն ամենայն եպիսկոպոսոնք և զարդապետը, որը զանազան բանաւոր պատման ներով, հեռաւոր տեղերէ, զժուարին և անապահով ճանապարհներով և այնպիսի խառնաշփոթ ժամանակի մը շկարողացան ներկայ գանուի ժողովոյն, հաւանութեան թղթեր առաքեցին առ ժողովի, կ'երեւի թէ Աղթամարէն այլ անձամբ ներկայ մարդ չէ զանուած ժողովոյն մէջ, և իրենք ալ թղթով մի խոսացած են ընդունելու իրենց վեհազոյն Հայրապետ զայն՝ զով որ ընտարէր ընդհանուր ժողովն, և անկից վերջ այլ եւս ինընազով շնալոլ՝ հպատակել բարձրագունին:

Երբ ընդհանրութեան հաւանութեամբ

կընտրուի կիրակոս վարդապետ Վիրապեցին¹, և օծուելով եպիսկոպոս և կաթողիկոս կը նստի ի զահն հայրապետական յէջմիածին (1441), մասնաւոր կոնդակով մը կ'օրհնէ ընդհանուր հայ ազգը և ի կապանաց և ի նզովից կ'արձակէ այն ամէնքը, որ նզովուած էին, և մասնաւորապէս իւր հայրենեաց ծավակի ջրերով շշապատուած Աղթամար կղզին իւր հայրապետական զահովը: Տ. կիրակոս կաթողիկոսի այդ օրհնութեան և ի նզովից արձակելոյ կոնդակն կամ թռութն, եթէ ոչ ամբողջովին՝ զէթ մասամբ մը, աստ ի մէջ բերելը կարեւոր կը համարիմ:

«Անուամբ անեղին Ասուուծոյ՝ Հօր և Որդու և Հոգուն սրբոյ, ես կիրակոս ծառայ ծառայիցն Ասուուծոյ և Յիսուսի Քրիստոսի, ողորմութեամբ և չնորհօց նորին կաթողիկոս աթոռոց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ, և Վաղարշապատու սուրբ Էջմիածնին, և ամենայն Հայոց: Գրիմ չնորհօց ամենասուրբ Հոգուն . . . , օրհնութին և պահպանութին և արձակումն յամենայն կապանաց՝ որք յընդհանուր աելին՝ Հայոց ազգիս հոգեւոր որդուց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին . . . և արձակեմ զամենայն կապիալս և զբանազբեալս յանիթիցն, մանաւանդ զԱղթամարայ կաթողիկոսն զՃէր Քափիթ»: Նոյնպէս այս թղթի շարունակութեան մէջ, ի նզովից կ'արձակէ նսեկ Աղթամարայ նայն ժամանակի եպիսկոպոսները և բոլոր նոցին վիճակաց ժողովուրդը: Այս կիրապով հազի թէ ձեւացաւ բաղձալի հպա-

տակութիւն և միութիւն աթոռոյն Աղթամարայ ընդ Հայոց ընդհանուր հայրապետի: Այն ինչ երկու տարի Տ. կիրակոս արծանընտիր կաթողիկոսն՝ իրեն վիճակուած բարձր պաշտօնը կը կատարէր, ամենայն ճշգութեամբ և արթնութեամբ, ի փառա Քրիստոսի և ի պայծառութիւն սուրբ եկեղեցւոյ, շարաջնար բանսարդուն իւր տրբանեկաց ձեռոց գահընկէց ընելով զինքը յաթոռոյն Էջմիածնի, անոր տեղ կը բազմեցնէ զՃէր Գրիգոր եպիսկոպոսն Մակուայ, վերըստին երկապակութեան և յառուցանեղով յազգիս: Այս խոսութիւններն և երկապակութիւնը տեսնելով Աղթամարայ միաբանը և իրենց յարեալ բնակիչը կողմանց, անդէն և անդ կը իզն իրենց երկու տարի առաջ ընդ Էջմիածնի հաստատած միութեան և սիրոյ կապն:

Մինչեւ ցարդ յետ բատական երկարելոյ մեր խոսքը Աղթամարայ ի նզովից արձակուելու մասին, գտննանց վերստին յառաջ տանելու մեր տեսութիւնը և դիտողութինք, նոյն կղզու յետազայ հայրապետաց վրայ, սկսելով Տ. Զաքարիայէն. մի և նոյն ժամանակ զանց շընելով յիշել այն ամենայն միութեան պարագայք և հակոռակութեան դիպաւածք, որք պատահեցան Աղթամարայ և Էջմիածնի հայրապետաց միջեւ:

Տ. Զաքարիայի Աղթամարայ հայրապետական գահը բարձրանալու որոշ թուականը զգիտեմք, բայց իւր բարսւց և գործոց վրայ ունինք ընդարձակ տեղեկութիւններ ի յիշասակարան և ի պատմութեան Առաքել վարդապետի Դավիթիացւոյ, զորս ջանամքը ըստ կարի համառուի աստ ամփոփել: Հայրապետու մեծ անոնց ձգած է ի պատմութեան. նա իւր ժամանակի արթուն զուարթուն, միր, զործունեայ, բաղարագէտ և ժողովրդեան ողին և եկեղեցւոյ պայծառութեան անձնանուեր մշակն էր. նորա հայրական բարերարութիւնը առհասարակ վայլեցին ոչ միայն ըրիստոնեայք այլ և այլազգիք: Բայս կոնդակին¹, Աղթամարայ մէջ, որ իւր ժա-

1. Վանացս ձեռագրաց մատենադարանի մէջ

1. Տ. կիրակոս վարդապետը, հայրենեօք էր Քաջերունեաց Խաւարասաւ գիւղէն, և մանկութեան ատեն կը թուաւով յԱղթամար, ապա աշակերտած է Սարդին և Վարդան վարդապետաց, և թօք (== 1597) թուին ձեռնադրուած է քահանայ Թաքէսօք առացելոյ աթոռոյն առաջնորդ Պետրոս եպիսկոպոսէն: Երթաւով կորփիւրպի վանքը հոն բնակեցաւ Յօտքարք, և այդ պատճառաւ կոչուեցաւ Աղթապետի: Իւր առաքինութիւնը լաւ կերպով կը նկարագրէ Թօգման Մեծութեցն: զանազան զբոց յիշաստակարանաց մէջ եւս կը յիշուի սոս միշտ գովութեամբք:

մանակ տակաւին քաղաք կը կոչուէր, կառ սուցանել տուած է երկու եկեղեցիներ սուրբ Աստուածածնի և սուրբ Սահմանոսի առուամբ։ գործեալ Աղթամարայ ժանքի համար, կամ գրած է իրեն անձամբ կամ սրբիշ մը զիել տուած Յայսմառուր մը և Եսարդիս գիրը։ Առանց մանրամասն պատմութեան ընկերու հակիք կերպով կը յիշուի ի իշխանին, Կայսրապետին երթն յէջմիածին, և մեր աշխարհի ընդհանուր հայրապետին, և երկուոց աթոռոց վրայ իշխեն։ և հայկական Զժմ (— 1462) թուին զԱլ Լուսաւորի և զապացն վասն երկիրով այլանեց և ոչ վասն Յախանուն, հետո առած Աղթամար գալն։ Այս երկարող ծանօթութեամբ չգումարուի հարի կը համարիմ բառ կարի մանրամասն յիշել Տ. Զաքարիայի յէջմիածին երթան և անտի յէղթամար զառնան։ յորում պիտի տեսնեն ընթերցող, նաև սուրբ Աղյոյն տեղափոխութեանց պատմաթեան մի մասն։ ՄՄեր զրութեամս սկիզբաները տեսանց, թէ Բնշակ 924 թուին սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչ Աղը ընդ այլ սրբազնան նշխարաց բերուցաւ յէղթամար և պահուեցաւ սուրբ Խաչի տաճարի մէջ։ բայց թէ զերը Բնշ կերպով տարուեցաւ ի կիրկիս, այդ մասին սուրյա տեղիկովինց կը պակսին։ այլ հաւանական է որ ճարտարութեամբ մը գողցուէր և հասեր է Գրիգոր Գ Պահաւանի կաթողիկոսի ձեռքն ի Հոռոմլաւ Երր 1292 թուին Հոռոմլան Եղիպատացւոց ՄՄկից Աղյուսակի սուլթանի իշխան

դանուելով Աղթամարայ կոնդակի երկրորդ որինակ մը, ընդօրինակուած (Ք Կ. Պոլիս ?) է ձեռն մեծ։ հ. Գրիգոր Վ. Տէէլալ. և բաղդատելով ըներկայու ընկ առաջնոյն հանդիպեցաւ ոչ սակաւ տարբերութեանց։ Ռւսոյ գրութեանը շարօնակութեան մէջ, Աղթամարայ կոնդակի համար Ս. օրինակ ըսկուով կը հասնէլուամ հ. Ներսէ Վ. Սարգսեանի ընդօրինակութեան, և թ. Օ. Երկորոց։
1. Տ. Ս. Լուսաւորչ Աղյուն վրայ գրած է ուն Կ. Կ. 1896 տարսոյ Արարատ ամսագրի մէջ։ էջ 215 և 263.

ուովմեան տակ ինկաւ, եկեղեցական ուրիշ սպասուց հետ, ըստ Ստ. Օրպէկեան ժամանակազրի, գերի տարուեցաւ, և փառաւուրագոյն մերոյս զբոհի աջ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի։ Յետ եղիպատական տիրապետութեան մեռն ի չոռու կայէ փոխազրուեցաւ ի Սիս, և կաթողիկոսն էր Գրիգոր Աղնաւարզեցին, երբ Հեթուամ թարեպաշտ արբայի շանիւք սուրբ Աղնա ազատուեցաւ զերութեանէ։ Դավթիեցի վարպագետն Աղացել կը պատմէ, թէ այն ինչ սուրբ Աղն տարին եղիպատակի սուլթանի ազարանցը, մաս ընկաւ և շատ մարդկի կը մեռնէին, և այդ մահը այն տաեն միայն զարբեցաւ, երբ սուրբ Աղը գործուցին ի կիրկիս։ Հայրապետական գահը ի Սոյ յէջմիածին փոխազրուած ծամանակ, սուրբ Աղն այլ զողցուելով կը տարուի յէջմիածին, ինչպէս կը յայտնէ հետեւեալ պատառիկն բաղուած ի յիշատակարանաց։ և յլուսաւորչի Աղն՝ ի Սոյ զաղացան և բերին յէջմիածին։ զնորդիբապի հայր Տէր կիրակոս՝ կաթողիկոս օրհնեցին։ Զանազան և իրարմէ տարբեր եղանակներով 144 ին գրուած յիշատակարանի կը յայտնեն սուրբ Աղնի։ ի Սոյ աթուածին և յէջմիածին տարուին։ Սակայն երկար տարիներ չմնաց անդ, այլ նախ ցիշ ժամանակի համար տարուեցաւ ի Դավթէ (Թարելզ), թէպէտ Արքու ամեազրի յօզուածազին կ'անզիտանայ թէ Բնշ կերպով սուրբ Աղն ընկաւ Դավթէ, ասկայն մեծ։ հ. Միցայէ Վ. Զամշեան, իւր պատմութեան Գրու հատարի 503 երեսով զրած է զորա պատմառը։ Երբ Զիհանշահն զնաց խորասան, յէջմիածին զժուութիւն ծագեցաւ Տ. Գրիգոր Մակուեցի կաթողիկոսի և նորա աթուակալ Տ. Արիստակիսի մէջ, և երկրորդն զօրանալով, ձեռք տառ հայրապետական իշխանութիւնն։ Այս խանակութեանց պահուն կաթողիկոսարանի վարդապետներէն Սարգիս անանով մէկը, յէջմիածն նէն գողնալով սուրբ Աղը կը տանի Գավթէ և ճան կ'ապասէ Զիհանշահի գալստեան, օրպէս զի անէկ կաթողիկոսական իշխանութեան հրաման ստանձնէ։ Ահա ճիշդ այս ժամանակ, Աղթամարայ Տ. Զաքարիա հայրա-

պետն, իրագեկ լինելով այս ամենայն եղեւ-
լութեանց, հետն առած թանկազին ընծա-
ներ, կը փութայ ընդ առաջ եղանել Զի-
հանշահի, և կը հանդիպի նորա և տիկնոջն
թէկում խաթոնի, ճանապարհի վրայ, դեռ
Դավթէծ չհասած: Ընդ իւր առած անզին
նուրբներն գնելով նոցա առջեւ, յետ յայտ-
նելոյ իրեն Աղթամարյ Հայրապետ լինեն,
կը ինդրէ նաեւ Էջմիածնի կաթողիկոսու-
թիւնն: Զիհանշահ տեսնելով Տ. Զաքա-
րիայի խօսակցութեան վայերուչ կերպն, և
նորա այդ պաշտաման յարմարութիւնն, և
մանաւանդ քաղաքափատական տեսակէտի,
օգտակար համարելով Հայոց նրկու Հայրա-
պետական աթոռոց միացումն, մեծ պատուավ
կ'ընդունի զնա, և խօսք կու առյ կատարել
նորա խնդիրը: Տ. Զաքարիա ի ցնծու-
թեամբ ընդ Զիհանշահի կը մտնէ ի Դաւրէծ,
այդ ժամանակ մեր վերը յիշած Սարգիս
վարդապետն, կու զայ առ շահն և իւր խնդ-
դիրըն և աղաշանըն կ'ընէ, յայնելով միան-
գամայն սուրբ Աջի իւր մօս գանուիլն: Բայց
շահն, որովհետեւ կանխաւ խօսք սուած էր
Տ. Զաքարիայի, հրամանագիր կը հանէ,
որ Հայոց ընդհանուր Հայրապետ նստի նախ
Տ. Զաքարիա, իւր մտերիմն և սիրելին, և
յետ նորա Տ. Սարգիսը. և սուրբ Աջը առ-
նելով ի Սարգսէ, կը յանձնէ Զաքարիայի:
Շահի այս հրամանին կամայ ակամայ կը
հնազանդի Սարգիս վարդապետը: Շահն կը
նուրիէ Տ. Զաքարիայի նաեւ պատույ հան-
դիրէներ (իսլամ), և մեծ հանդիսով կը զրկէ
յիշմածին, և նորա պաշտպանութիւնն կը
յանձնէ իւր Հասան Ալի որդույն, որ կար-
գուած էր մարզպան Հայոց: Տ. Զաքարիա
ընդ Սարգիս վարդապետի հետն առած սուրբ
Աջը կու զայ Էջմիածին, և անկէ զուրս
հանելով զ.Տ. Գրիգոր Մակուեցի կաթողի-
կոսն և զ.Տ. Արքուտակէս, կը նստի անդ ի
զահն ընդհանուր հայրապետաց Հայոց, մի
և նոյն ժամանակ իւր իշխանութեան ներըց
ունենալով նաեւ Աղթամարյ աթօռը: Քիչ
օր վերջն ալ վերոյիշեալ Սարգիս վարդա-
պետը իրեն փոխանորդ անուանելով կը
ձեռնազրէ եպիսկոպոս Էջմիածնի:

Տ. Զաքարիայի գործունէութիւնն և անձ-

նանուրիութիւն իիոտ լաւ կը տեսնակի, ան-
թիւ չարիքներ և արիւնչեղութիւնն պատ-
ճառող պատերազմի մը շարունակութեան
արդելք լինելուն մէջ. որու համար արդարեւ
իւր անունն և անձնաւորութիւն պաշտելի
դարձաւ, ոչ միայն իւր տառապեալ հօտին,
այլ և այլազգեաց:

1464 տարույ մէջ գծուութիւն և թշնա-
մութիւն ծագելով երկու այլազգի Զիհանշահ
և Զիհանգիր իշխողաց միջեւ. Զիհանշահ
իւր չորս զօրապիշաց առաջնորդութեամբ կը
զրկէ աստուերկու հազար հեծելազօր Զիհան-
գիրի բաղարաց վրայ՝ որը ուղղակի դիմե-
լով խլաթյա վրայ՝ կը պաշարեն, և հուսկ
ուրեմն պարապար կործանելով, բաղարը ա-
ւարի Կ'առնուն, և մէջը զտնուող թէ այլազ-
գիրները և թէ ըրխոտնեաները կը կողոպ-
աւեն. յետոյ ներբնաբերը պաշարելով կը
սկսին ուժին պատերազմիւ: Հանգոյն Խլա-
թյա, պիտի աւերիին, կործանէին որչոյն
Տուրուբերանը, և զուցէ մեր աշխարհի միւ
նահանգներին զոմանս, եթէ աստուածային
անհուն անսահման զիմութիւնը, Հայստա-
նեայց հայրապետական գահուն վրայ բարձ-
րացուցած չլինէր, ժամանակին յարմար քաջ
հովին զջ. Զաքարիա:

Առաքել Գովրիթեցին ընտիր կերպով նկա-
րազրած է, թէ ինչպէն Տ. Զաքարիա հայ-
րապետն ամսնելով Զիհանգիր ամիրայի իշ-
խանութեան ներըն զտնուած բաղարաց
կործանումն և բնակչաց տառապանիները,
և ... զգերելարիլն և մասնիլն ի ձեռա տ-
սօրինաց, զաւերիլն և զբանգիլն. զիսախ-
տումն եկեղեցեացն և զտապալումն սրբոց
սեղանոցն. զգերելարիլն սրբութեանց և զիս-
ախտումն փառաբանութեանցն Աստուծոյ, և
զտարաշխարհիկ լինելն ամենայն խառնիճա-
զանն ժողովրդեան, զգերիլն և զտատանիլն».
արտաշաթափիծ կը խորհի, կը մտածէ և վեր-
ջապէս կը ստեղծէ, զիւտ մը կը զանէ,
փրկելու իւր սիրելի հօտին: ինցընըը կը
զոհէ հասարակաց փրկութեան համար, զո-
րացած Հոգուով սրբով, ի բաց կը զանէ ա-
մենայն կասկած և երկիւզ, կը համարձակի,
կը փությա, կը զիմէ, ընդ առաջ կ'ենէ
Զիհանշահի, և կ'աղերսէ զնա և զտիկին,

զագարեցուցանել պատերազմն, միանգամայն խոստանալով և տալով . . . զենադիրի՝ տանուց զարթու յամիրայէն Բաղչու (ի Զհանշղիք), և տալ կայսերն (Զիհանշահի), առ ի մալ երկրն ի խաղաղութեան»։ Զիհանշահն և արկինն թէկում, որ մեծ զութ ունէր ըրիստոնէից վրայ, կը հաւանին Ց. Զաքարիայի աղաշանաց և երաշաւորութեան, և ըստ Դավիթիցույց, իրեն կու տան «զնշանազիւ և զիրամն՝ առնել զինչ և կամեսից»։ Հանի արբունիքիցն ունի ունեմիք սրտի ենելով քաշափիրտ հայրապետու, երագուն օդապարիկ երիվարի վրայ հեճնելով Քավիթէ կը մեկնի, կը ճախրէ, կը ոլանայ, կը հասնի ի թաղէ, ուր կը գտնուէր Զիհանզիր Յայնելով երկու իշխանութեանց մէջ խաղաղութիւն հաստատուելու պայմանիցն, մեծ ընդանելութիւն և պատիւ կը դանէ Զիհանզիրէն, որը խօսք կու տայ նաեւ աւալու որոշուած տուրքն առ Զիհանշահ, միայն ինդրելով ի Ց. Զաքարիայէ, որ եա գարձնէ Խոմթայ միշնամբ բերդը պաշարութ թշնամոյ զօրքերը։ Հայրապետ կը փութամ կը կատարէ ամիրայի ինդիրքն, իրմէ ձեռագիր առնելով կ'երթայ ի Խալթ և ցուցընելով Զիհանշահի և Զիհանզիրի գրեն, կը համոզէ զօրապուխտ և զջորս թշնամոյ, կը հեռացնէ Զիհանզիրի ստհմաններէն, ինըն ալ զառնարվ ի Բաղէշ, կը մնայ անդ երեք ամիս, և այդ ժամանակի մէջ հաւաքելով խօստացուած տուրքն, մեծ պատուով կը բաժնուի Զիհանզիրէն, կը հասնի Դավիթէ և առ Զիհանշահն հատուցանելով որոշուած հարկն, մեծապէս կը պատուի ի շահէն, և արյախ ըստ պատշին, և Ազատեաց զամենայն խօսնինազանմ մոզովուրզն՝ զիայ և զտաճիկ՝ ի ձեռաց անօրինաց և ի շառն գերութենէ։ Եթե այսօրինակ քաջագրութեանց Ց. Զաքարիա կը դանայ իւր ամեռն ի սուրբն Էջմիածին, և և մեծարանոց խիլայեալ եղեւ յերկուց գոռոզաց այլասենից, ի թուրքմանէ փատիշահէ (Զիհանշահէ) և ի քրոյց ամիրայէ (Զիհանզիրէ)։ Բայց այսպիսի պատիւներէ և փառաւորութիւններէ վերը, Ց. Զաքարիա չկարողացաւ երկար ժամանակ մնալ, զիայ անիղն մարզպանի ձեռքէն, կերպ կերպ խոստումներով և ընծաններով ետ կը գարձնէ պատահարները։

Կէտէ հեռ և նախանձ ժամանակի հոգեւորականաց, և մանաւանդ Ց. Գրիգորի Մակուսցոյն և Ց. Արքաւակեսի, յուշիկ կ'արձարձէինն և մերձ էին բռնկելու և յարուցանելու խոտվութեանց հրդեհ մի։

Երբազայ կողմերէն ապստամբութեան լուր հասներով Զիհանշահի, փութով բազմութեամբ զօրաց կ'երթայ նուանելու զՊարսս։ Ահա ճիշդ այս միջոցիս, տեսնելով վերոյիշեալ մասացողքն Ց. Զաքարիայի հզօր պաշտամնին և մտերմին, կը միաբանին շատ զանձ և նուէրներ հաւաքելով իրենց կոսակիցներէն, կ'երթան քանի մը իշխանաց հետ առ մարզպանն Հայոց՝ առ Հասան Ալի, և նուէրներն զնելով նորա առջեւ հազար ու մէկ ամբաւտանով թիւներ կ'ընեն Ց. Զաքարիայի վրայ։ Ըստով նաեւ թէ նա կը մտածէ թագաւորել Հայոց վրայ. և եթէ զմել վերտափն հաստատուած մեր աթոռոյն վրայ, ամենայն խոնարհութեամբ հպատակ կը մինիսը բեզ և անխափան կը ճնարենք որոշուած հարկերը։ Հասան Ալի թանկագին ընծաններէն աչքը կուրացած, մտիկ ընելով անոնց բաժներուն, մարդիկ կը զրիէ առ Ց. Զաքարիա, պահանջելով անկէ մեծ գումարներ, և բսելով, որ եթէ շինարես՝ չես կարող մնալ այդ իշխանութեան մէջ։ Իսկ արիստրտ հայրապետը հասկնաւով իրաց եղելութիւնը, և զիանալով թէ ապառում չկայ այդ անիղն մարզպանի ձեռքէն, կերպ կերպ խոստումներով և ընծաններով ետ կը գարձնէ պատահարները։

Արդ, տեսնենք թէ ի՞նչպէս ձմեռնային եղանակի մէջ, կը թողու Ց. Զաքարիա Էջմիածինի գահն և կը մեկնի յԱղթամար։

Հարայարելի

